ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Առակների ուսուցումն ավագ դպրոցում

Ուսուցչուհի՝ Մանիկ Լեմսիկի Կարապետյան

(անուն, ազանուն, հայրանուն)

/<<Բանդիվանի միջն. դպրոց>>ՊՈԱԿ/

Գյումրի 2023

## Բովանդակություն

Ներածություն.....3

Առակների ուսուցումը ավագ դպրոցում.....4

Եզրակացություն.....14

Գրականության ցանկ.....15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում մշտապես նորոգվելու միտված ստեղծագործական միտքն իր հետ բերում է գնահատման նոր չափանիշներ։ Ժամանակն իր օրակարգում այսօր կյանքի է կոչել հայ գրականության վերագնահատման, վերընթերցման, վերարժևոման հարցերը։ Ավելին, ժամանակակից աշխարհի, հասարակական զարգացումների համատեքստում որոշակի առումով դիտարկվում են երեխաների և պատանիների կողմից իրականության նկատմամբ հոգևոր, բարոյական և գեղագիտական սկզբունքների փոփոխություններ։

Ժամանակակից հանրակրթական համակարգն իր առաքելությունն իրականացնում է ոչ միանշանակ պայմաններում, որոնք առավելապես կապված են կրթական համակարգի դերի, տեղի և գործառույթների փոփոխության հետ։ Այս առումով բոլորովին երկրորդական չեն երեխաների սոցիալականցման խնդիրները, հասունության տարիքի նվազումը կամ այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սոցիալական ցանցերի, տեղեկատվական և զանգվածային լրատվության միջոցների կողմից, այսպես կոչված կլիպային, տեսահոլովակային մշակույթի, առասպելականացված կարծրատիպերի քարոզումն ու տարածումը, ինչպես նաև ազգային մշակույթի մակերեսային ընկալումը, մշակութային ձեռքբերումների նկատմամբ թերահավատ մոտեցումը և այլն ։ Կրթական խնդիրները սերտորեն միահյուսվում են մշակութային արժեքների ձեռքբերման կարևորության հետ։ Մշակութային արժեքների տիրապետումը դիտարկվում է որպես ծամանակակից մարդու դաստիարակության և կրթության կարևոր բաղադրիչ։ Մշակույթը դարերի հոլովույթում եղել է մեր ազգը պահող ու պահպանող կենսական ուժը։ Այն առավելպես մեր ազգային ինքնությունն է, մեր դիմագիծը, մեզ բնորոշող և ուրիշ ազգերից տարբերակող ամենակարևոր գործոնը, մեր ազգային վարկանիշը։

**Աշխատանքի նպատակն** է ուսումնասիրել <<Առակների>> ուսուցումն ավագ դպրոցում։

**Աշխատանքի խնդիրներն են՝** ուսումնասիրել առակները,կազմել դասի պլան։

# ԳԼՈՒԽ 1-ԻՆ

## ԱՌԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Արդի կրթական համակարգում ազգային և համաշխարհային մշակութային արժեքների սերմանումը, դրանց փոխանցումը աճող սերնդին դիտարկվում է որպես նրանց ձևավորվող արժեհամակարգի կարևոր բաղադրիչ: Երեխաների արժեհամակարգի ձևավորման գործընթացում մշակութային արժեքների ձեռբերումն վերջիններիս ստեղծագործական բազմազան կարողությունների զարգացման աներկբա երաշխիք է, որն օգնում է նրանց կառուցելու աշխարհի սեփական պատկերը, մշակութային բազմազանության համայնապատկերում կողմնորոշվելու, պահելու և պահպանելու ազգայինը, պատրաստ լինելու մշակութային կառուցողական երկխոսության: Այսօր ունենք հրամայական դաստիարակելու հայ քաղաքացի, քաղաքական առաջնորդ, ինչպես նաև հզորացնելու պետությունը՝ այս գործին ծառայեցնելով կրթական և մշակութային համակարգը:

Կրթությունը և մշակույթը, աշակերտի արժեհամակարգի ձևավորման կարևոր բաղադրիչներ լինելով, ուղղակիորեն կանխորոշում են նրա՝ որպես անհատի ձևավորումն և զարգացումը: Սակայն ժամանակակից դպրոցը ոչ միշտ է բավարարում աշակերտի կարիքները գեղագիտական ոլորտներում: Խնդիրն առավել ակնհայտ է դառնում երեխաների ստեղծագործական, քննադատական մտքի զարգացման և դրսևորման թիրախային դիտարկման ժամանակ: Մարդու կողմից ստեղծված գրական արժեքներին հաղորդակից լինելը դրական ազդեցություն է թողնում երեխաների ստեղծագործական, գեղագիտական մտքի զարգացնման վրա, մոտիվացնում է նրանց վարքագիծը, ապահովում է երեխաների և հասարակության միջև կայուն հարաբերությունները:

Ըստ էության ուսուցումը պիտի միտված լինի նաև աշակերտների ստեղծագործական,կրթամշակութային կարիքների բավարարմանը և հոգևոր, մշակութային միջավայրի լավարկմանը:

Հանրակրթության մարտահրավերների համատեքստում արդիական իմաստավորման անհրաժեշտություն ունի հատկապես առակի՝ որպես առանձին

ժանրային/գրական տեսակի դրսևորման ուսուցումը հանրակրթական դպրոցում։

Առակի մեջ գաղտնագրված գաղափարները, բարոյական սկզբունքները, մարդկայինի մասին պատկերացումները ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտնջենական արժեքներ են, որոնք յուրաքանչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են նորովի։

Հանկարծադեպ ու անակնկալ փոփոխություններն առաջացրել են բարոյական սկզբունքների , սոցիալական հարաբերությունների հախուռն արժեզրկում, նոր արժեքների նույնքան հախուռն ներխուժում կեցության տարբեր ոլորտներ։ Անցումային շրջանի այս անխուսափելի երևույթներն իրենց ազդեցությունն են թողել աշակերտների հատկապես մտածողության, հոգեբանության, հուզաշխարհի վրա։ Ուսուցչի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխության ձևերի մեջ, նշմարել մշտական արժեքների գոյակերպը, դրանց հետ հաղորդակցվելու ուղիների միջոցները և գտնել նաև ընթերցող աշակերտներին։ Չմոռանանք նաև , որ անհատի արժեքների համակարգում մարդու լիակատար ու բովանդակալից կենսակերպը պայմանավորող շատ նախադրյալների շարքում վճռորոշ նշանակություն ունի գեղեցիկի զգացողությունը։ Մարդկային մտածողության փոփոխության հետ փոխվում է նաև մարդու ճանաչողության սահմանները՝ եզրագծված ժամանկաի և տարածության մեջ։ Վերաիմաստավորման են ենթարկվում մարդու պատկերացումները շրջապատող աշխարհի վերաբերյալ և այդ համատեքստում առավելապես ակնհայտ ուրվագծվում է գեղեցիկի հասկացությունը։ Առավել ևս այն պարագայում, որ հասարակական զարգացման, աշխարհաճանաչման ամենատարբեր փուլերում այս հասկացությունը տարիների մեկնություններ է ունեցել՝ սկսած աստվածային կամքի արտահայտությունից, սուբյեկտիվ էությունից, մինչև <<բնության մոտ լինելը, կամ բնությանը նմանվելը>> [5, էջ 375]։

Դեռահասի մտածողությունը առարկայական է, ամեն ինչ նա ուզում է տեսնել, զգալ սեփական փորձով.լինի դա իրապես,թե երևակայությամբ։ Այդ պատճառով էլ գեղեցիկի մասին ուսուցչի զրույցները չպետքէ դուրս գան առարկայական ոլորտից, պետք է ուղեկցվեն կյանքից կամ գրականությունից արված շոշափելի օրինակներով։ Առակների ուսուցման միջոցով հնարավոր է դառնում խթանել երեխաների և

պատանիների գեղագիտական դաստիարակությունը նպաստել նրանց քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության, համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գեղեցիկը տեսնելու, զգալու և կերտելու ունակությունների ձևավորմանը ու զարգացմանը։

Վկայություններ կան, որ առակագիտությունը որպես առանձին դասընթաց՝ առասպելավարժություն, ուսուցանվել է հոգևոր դպրոցներում [4 էջ, 105 ]։ Ապագա քարոզիչներն ուսումնասիրում էին առակ գրելու և մեկնաբանելու արվեստը։ Ինչպես նկատում է գրականագետ Դ. Գասպարյանը, <<Այս դասընթացը նպաստել է քարոզիչների ճառերին հռետորական և ճարտասանական հմտությունների զարգացմանը։ Բացառված չէ, որ և՛ Գոշի, և՛ Այգեկցու առակների ժողովածուներն ստեղծված լինեն հենց այդ նպատակով>> [2, էջ 197]։

Առակը, լինելով ժողովրդական բանահյուսության մեջ ձևավորված փոքրածավալ էպիկական ժանր, մասնավորապես կենդանիների մասին հեքիաթի տարատեսակ՝ սեղմ սյուժեով ու այլաբանական բովանդակությամբ, գրական հնագույն տեսակներից մեկը, իր բարոյախոսությամբ, օրինակ դառնալու և **առ ակն** կատարվածը ներկայացնելու ներքին հնարավորություններով, յուրատիպ ազդեցություն կարող է ունենալ, աշակերտների դաստիարակության վրա [6 էջ 23]։ Ընդօրինակումն առավել դյուրին է, քան վերացական խրաթը ընդունելը։ Եվ այս պարագայում առավելապես առաջնություն է ստանում գեղարվեստական ընդհանրացված ժամանակն ու տարածությունը, որը դրսևորվում է առակում՝ ի հակադրումն կոնկրետ ժամանակի։

Առակներն ստեղծում են աշխարհըմբռնում՝ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, որի համակարգում առաջնային արժեք են ձեռք բերում արծածված թեմաները [3, էջ,174]։

Ըմբռնելով առակի կառուցվածքը՝ աշակերտը կկարողանա ընկալել ենթատեքստը, փոխաբերական, այլաբանական իմաստները ինչպես նաև առակի լեզվառճական առանձնահատկությունները։ Ավանդականի և արդիականի փոխհարաբերություններում, առակի կառույցում ժամանակի շունչը զգացող և նուրբ դիտողականությամբ առաջադրված հրատապ գաղափարադրույթներ են արծածվում։

Առակի ուսուցումը սերտ աղերս ունի գեղեցիկի արտահայտման, դրա բովանդակային կողմի բացահատման հետ։ Առակների ուսուցուցումը և դրանց ուսուցմամբ դրական ունակությունների զարգացումը լավ հիմք, հենման հարթակ կարող է դառնալ ուսուցչի համար հանրակրթական դպրոցում դաստիարակչական աշխատանք իրականացնելու համար։ Նշենք, որ աշատերտների մեջ համամրդկային հատկանիշները մշակելու և զարգացնելու գործընթացները չպետքէ կապված լինեն միայն գեղարվեստական բնագրերի ուսումնասիրությունների հետ։ Այդ գործընթացները տևական և բազմաբնույթ աշխատանք են պահանջում։

Այդ աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ ստեղծագործական ինքնուրույն փորձերի խրախուսումն է, մասնավորապես՝ իր իսկ կողմից ստեղծված առակի միջոցով արտահայտել սեփական դիտարկումներն ու մտորումներն աշխարհի մասին,մ ինչպես նաև հանդես գալ այլաբանական հակիրճ խոսքով, զատել միմյանցից իրականն ու այլաբանականը՝ տարբերակելով գլխավորը երկրորդականից։ Նման դիտանկյունից, երբ քննում ենք մասնավորապես առասպելավաժության հնարավորությունները, որը ենթադրում է աշակերտներին ոչ միայն քերականություն և ճարտասանություն սովորեցնել, այլև առակներ գրել, սերտել և մեկնել։ Վերածնելով առասպլավարժությունը որպես քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման միջոց՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկի զգացումը՝ այն չտարանջատելով դաստիարակչական խնդիրներից։

Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու ապագային, երբեք չպետքէ կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբը ու ընթացք, երեկն ու այսօրը, պատմությունը ու արդիականությունը։

Վերադարձը առակագիտության և առակներով ուսուցանելուն խոսում է ժողովրդի և նրա գրականության կեսունակության մասին։ Անցյալի ու ներկայի միասնությունը ձևավորում է կարևոր նշանակություն ունեցող ժամանակների կապը, որը ժամանակային պարզ հաջորդականությունից վերածվում է նաև դաստիարակչական հնարների ընտրության հեղինակային հայեցակետի։ Առակագրությունը հայ արձակի մեջ հատկապես ներմուծել է անիմանալի

անբացատրելի երակ՝ խորապես ինքնատիպ և ուսուցողական։

Առակներում իրական նկարագրությունը նրբորեն կտրվում-անջատվում է առարկայական կշռից, նյութական ծանրությունից, շարունակվում մտքի և բարոյախոսության ոլորտում և տրվում մտածողության և խոհական թռիչքներին։ Առակներն իրենց բարոյախոսությամբ մեզ պարտավորեցնում են սերնդեսերունդ փոխանցել այլաբանորեն ասված դիպուկ խոսքը ու միտքը, հիշողությունը պայքարի զենք է և գոյատևման հնարավորություն, տեսողությունը ու մտքի հայացքը միասնաբար են ընկալում ու վերարտադրում երևույթը, շարժումը, գոյությունը։

Առակագրությունը մեզ համար քարտեզագրում է մի ամբողջ աշխարհ, որը դաստիարակչական ինքնատիպ հնարներ ունի։ Առակը ծնվել է իրականությունից, հասարակությանը դատելու մտահոգությունից։ Սա է առակի գրական դպրոցը՝ թե՛ որպես գրական դասերի դպրոց, և թե՛ որպես գրական կողմնորոշման դպրոց։

Առակների քննումով վերջնարդյունքում ակնկալում ենք ունենալ գրականության նշանակությանը հաղորդակից, ազգամշակութային արժեքները գնահատող, արժևորող, քննադատական մտածողությամբ զարգացած երևակայությամբ ազատ անհատ։

## ԳԼՈՒԽ 2- ՐԴ

## ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՕՐՅԱ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուշագրավ է, որ առակի տեսակի զարգացումը եղավ հաջորդական՝ Գոշն ու Այգեկցին մեկ սերնդի տարբերությամբ շարունակել են իրար և, հավանաբար, իրար չեն ճանաչել. Գոշն ապրել է Հայաստանի հյուսիս-արևելքում, Այգեկցին՝ Կիլիկիայում: Իրար չճանաչելն ասում ենք թեական՝ հավանաբար, որովհետև Գոշը եղել է Կիլիկիայում և բացառված չէ, որ որևէ , թեկուզ և հեռակա, առնչություն եղած լինի նրանց միջև: Այս հաջորդականությունը նշանակում է, որ հայ առակագիրների ի հայտ գալը ժամանակի պահանջ էր: Առակ գրական տեսակի անվանումը միջնադարում նշանակել է նաև հանելուկ, որ հանդիպում է Շնորհալու ստեղծագործության մեջ: Առակ եզրույթին փոխարինել է նաև առասպելը: Գոշի և Այգեկցու ժառանգության մեջ առակն արդեն որոշակի գրական տեսակ է :

Ինչպես երևում է՝Գոշի ընդգրկման շրջանակները շատ լայն են՝ կրոն, հավատք, պատմություն, իրավագիտություն, գրականություն:

Առակներն ունենում են պատմողական մաս, որի մեջ մարդկանց, կենդանիների ու բույսերի կյանքից պատմվում է որևէ դեպք և խրատաբարոյախոսական մաս, որի մեջ տրվում է այդ պատմողական մասի գաղափարական նպատակը, այն, թե ինչի համար է դա պատմվում: Առակի կառուցվածքի այս ձևը բնորոշ է նաև հայ առակագիրներին:

Առակը՝ որպես գրական տեսակ, ընդունելի էր քրիստոնեական եկեղեցու կիողմից, որոհետև իր խոսքն ու քարոզչությունները առակներով էր համեմում նաև Հիսուս Քրիստոսը: Հիշենք նշանավոր առակներից մի քանիսը, որոնք Հիսուս ոչ միայն պատմում էր, այլև մեկնաբանում՝ <<Սերմնացանի առակը>>, <<Տասը կույսերի առակը>>, <<Այգու մշակների առակը>>, <<Որումի առակը>>, <<Անառակ որդու առակը>>, <<Աղքատ Ղազարոսի առակը>>, <<Երկու որդիների առակը>>, << Այրի կնոջ և դատավորի առակը>>, <<Փարիսեցու և մաքսավորի առակը>>: Այս առակների թիվը հասնում է շուրջ երեք ու կես տասնյակի: Իրենց բնույթով դրանք Աստծու խոսքն են, առակներ են երկնքի արքայության մասին, բարոյախոսական,

կենսափիլիսոփայական այլևայլ հարցերի ու վիճակների մասին [7, էջ 498]։

Մխիթար Գոշը գրականության պատմության մեջ հիշատակվում է որպես առակագիր, իսկ հայ մշակութային կյանքում նա ունեցել է ավելի մեծ դեր՝ ստեղծելով <<Դատաստանագիրք հայոց>> օրենքի ժողովածուն, գրելով հոգևոր բովանդակությամբ տարատեսակ աշխատություններ, շարադրելով <<Շարք հայրապետացն Աղուանից>> իր նշանակությամբ եզակի մատյանը, կառուցելով Նոր Գետիկի Սբ. Աստվածածին Տաճարը և կրթելով բազմահմուտ աշակերտներ։

Մխիթար Գոշի առակները գրական այդ տեսակի լավագույն արտահայտություններն են։ Ուսումնասիրողը գրում է. <<Առաջին արձակ երկը հայ գրականության մեջ, որ պատկանում է զուտ գեղարվեստական գրականության տեսակին Մ. Գոշի առակների ժողողովածուն է>> [16, էջ 505]։ Մ. Գոշը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ [17 էջ 505]։

Հայ գեղարվեստական արձակի հիմքերը 5-րդ դարի հայ մատենագրության մեջ են, ուր համադրված են վեպն ու պատմությունը, առասպելն ու պատմությունը, զրույցն ու պատմությունը, լեգենդն ու վարքը, բայց, որպես ինքնուրույն տեսակ, առակը առաջինն է։ Հայ գեղարվեստական արձակն հիմնավորվել է 5-րդ դարում, քանզի մատենագիրների երկերը որքան պատմագիտական, նույնքան էլ գրական-գեղարվեստական արժեք են՝ հենց որպես պատմական վեպի նախնական դրսևորումներ։

Գոշի կենսագրի Կիրակոս Գանձակեցին, հիշատակելով նրա գլխավոր ժառանգությունը, առակների մասին ոչ մի խոսք չի ասում։Ձեռագրերում՝ որպես առակների հեղինակներ,նշվում են նաև Գետիկ վանականի և Հովհաննես Ծործորեցու անունները։

Գոշի նպատակն էր այլաբանորեն պատկերել, ներկայացնել և կերպավորել ճշմարտությունը։ Մ. Գոշից մեզ է հասել 190 առակ։ Գոշի առակների ամբողջական հրատարակությունը Վենետիկում իրականացրել են Մխիթարյանները։

Գոշի առակները բնույթով երեք տեսակի են՝ առասպելական, բարոյական և ստեղծական, որոնք ներկայացվում են երկու խմբավորումով՝ <<Առակք,

առասպելականք և բարոյականք>> (160 անուն), <<Առակք ստեղծականք>> (30 անուն)։ Առաջին խմբավորման նյութը վերցված է բույսերի ու կենդանիների կյանքից, իսկ երկրորդ խմբավորման`՝ ստեղծական առակների հերոսները իրական մարդիկ են։ Առակներում Գոշը նաև մարդասիրական, քրիստոնեական գաղափարներ է տարածում։ Ճնճղուկների և արագիլի մասին պատմող առակում արագիլը պաշտպանում է ճնճղուկներին, թույլ տալիս, որ իր բնի մեջ ձագ հանեն և սպանում է ճնճղուկների ձագերին ուտելու եկած օձին։ Ավարտն այսպիսին է <<Առակս ուսուցանում է կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք>>։ Այս դեպքում պատժվում է նաև բռնությունը, որովհետև սահմանափակում է մյուսի ազատությունը։

Արջը ուտում է մրջյուններին, և մրջյունները մտածում են սպանել արջին։ Կանչում են պիծակներին, գոռեխներին, շնաճանճերին, սրանց նմաներին և <<աղաչում օգնել ազգասիրաբար>>։ Սրանք հալածում են արջին, վերջինս գլուխը խփում է քարի և վերք ստանում։ Վերքը որդնում է, որդերը թափանցում են նրա մարմնի մեջ, արջը ցավից մտնում է ջուրը և խեղդվում։

Ուրեմն՝ ուժեղ լինել դեռևս զորավոր լինել չի նշանակում, պետք է նաև համերաշխ ապրել փոքրերի հետ, որովհետև փոքրերն էլ պաշտպանվելու և հակառակորդին վնասելու իրենց ձևերն ունեն։

<<Դաստաստանագիրք>> ստեղծողն ու առակներ գրողը նույն հայացքով է նայում իրականությանը, և այդ գրքերը, կիրառության տարբեր ոլորտների համար նախատեսված լինելով հանդերձ, շատ մ իասնական են և լրացնում են մեկը մյուսին։

Մ. Գոշն իր հաստատուն և արժանավոր տեղն ունի հայ միրջնադարյան գրականության մեջ։

Առակի տեսակի հաջորդ նշանավոր ներկայացուցիչը Վ. Այգեկցին է։ Նա եղել է հոգևոր գործիչ ու քարոզիչ, գրել է ճառեր ու խրատներ, Այգեկցին ոչ միայն շարունակեց առակի տեսակը այլև այդ տեսակի շրջանակներից դուրս՝ հիմնադիրը դարձավ հայ գեղարվեստական արձակի այնպիսի տարատեսակների, ինչպիսիք են փոքր պատմությունը, սրամիտ զրույցը կամ այլ կերպ՝ մանրապատումը,

մանրավեպը ու նորավեպը։

Կյանքի մի որոշ շրջանում նյութապես նեղված, զրկված իր գրքերից ու ապահովությունից, Այգեկցին վարել է հալածական-թափառական կյանք։ Թեև հայտնի չէ թե ինչու է Այգեկցին հալածվել, բայց կարելի է ենթադրել, որ նրան չեն հանդուժել այն բանի համար, որ տեսել է <<բազմաթիվ մեղքեր և ավելի շատ գաղտնաբար լսել>>։ Այգեկցու պահպանված ժառանգությունը գրական հետաքրքրություն է երկայացնում հիմնականում առակներով։ Նրա առաջին գործը <<Արմատ հաւատոյ>> ժողովածուն է որի մեջ ի մի են բերված հայ և այլ ազգի հգևոր գործիչների մատենագրական վկայությունները։

Վ. Այգեկցին ոչ միայն գրել է առակներ, այլև դրանք կիրառել է իր ճառերի մեջ։ Առակների կողքին ստեղծվել են առակավոր ճառեր։ Ճառերի մեջ գործածված առակները ոչ միայն իր ստեղծածն են այլև ուրիշների։

Այգեկցու առակները սրամիտ պատմություններ են, որոնք ավարտվում են <<Ցուցանէ առակս>> խրատաբարոյախոսական մասով։ Այդ առակների հերոսները և՛ մարդիկ են, և՛ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչներ և՛ առանձին սրբատեղիներ, ինչպիսիք են եկեղեցին ու ջրաղացը։

Ա. Բակունցն Այգեկցու քառասուն առակ փոխադրել է 1930-ական թթ.,սակայն դուրս է թողել նրանց բարոյախոսական մասը։

Այգեկցու առակներում ծաղրի կամ քննադատության են ենթարկվում հոռի բարքերը, այն ամենը, ինչը խախտում է պատվիրանների կարգը։ Այգեկցին ծաղրում ու ոչնչացնում է բլոր նրանց, ովքեր ապրում են ուրիշի հաշվին։ Այդպիսիններին այլ կյանք է վիճակված։

Էշի քուռակն ասում է մորը՝ ինչու՞ մեր կրած գարին խնայում են մեզնից, օրը մեկ անգամ են տալիս, իսկ խոզին ,որ ջանք չի թափել, կերակրում են այնքան, որ գիրանա։ Փորձառու մայրը պատասխանում է. <<Համբերիր և ապա՝ ես քեզ պատասխան կտամ և քո աչքով կտեսնես>>։ Մեկ շաբաթ հետո խոզին մորթում են, և էշը բացատրում է քուռակին. <<Նրանից գարու հաշիվն են ուզում>> (<<Գարու հատիկ>>)։

Սա նշանակում է, որ Այգեկցին արդար աշխատանքի պահանջատերն է։

Առակների ուսուցողական արժեքն անվիրաճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել սովորողի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով։ Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանում նախատեսված է հայ գրականության ուսուցումը։ Ստորև կներկայացնենք առակների ուսուցումը։

## ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿ

Առարկա- Հայ գրականություն

Դասարան-10-րդ

Տևողությունը- 45 րոպե

Թեման- Ա) Վ. Այգեկցի

Բ) Առակներ

Նպատակը՝ Ակադեմիական

Իմանալ՝

1.Առակի արտահայտած հիմնական գաղափարը

2.Մեկնաբանել լեզվական և ոճական առանձնահատկությունները

3.Հասկանալ և մեկնաբանել պատճառահետևանքային կապերը

Սոցիալական

Կարողանալ

1.Նկարագրել առակում պատկերված իրադարձությունները։

2. Ընտրել առակի հիմնական իմաստն արտահայտող մասը և բացատրել։

Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդում

Մեթոդները – համադրական, վերլուծական, համեմատական։

Դասի կահավորումը – դասագիրք, հեղինակի նկարը, գունավոր գրիչներ։

Խթանում – Այս փուլում կիրառում եմ վերլուծական մեթոդը, աշակերտները վերլուծում են առակի բովանդակությունը, դուրս են բերում իրենց դուր եկած մտքերը և համեմատում են։

Վերջնարդյունք- Ներկայացնի առակագրի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի։

Վերարտադրի, վերաշարադրի առակները։

Դրսևորի քննական և դատողական մտածողություն։

Գնահատի փաստարկները, հայտնի սեփական տեսակետը։

Բազմաշերտ բովանդակությամբ ու գեղարվեստական արժեքով են հատկանշվում Այգեկցու առակները։ Դրանք խրատական-ուսուցողական ստեղծագործություններ են, որոնցով հեղինակը ծաղրել ու պարսավել է մարդկային արատները՝ չարախոսությունը, խաբեությունը, անմտությունը, դավաճանությունը, վախկոտությունը և այլն։ Նա խրատել է լինել բարի, խոհեմ, հնարամիտ, խուսափել ծայրահեղություններից և ճանաչել սեփական ուժերը։

Այգեկցու առակները գրված են պարզ ու հստակ լեզվով, արտահայտիչ ոճով, սեղմ ու կենդանի երկխոսություններով և առողջ հումորով։ Առակների գեղարվեստական կարևոր արժանիքներից մեկն այն է, որ Այգեկցին կիրառել է ժողովրդական պարզ ու հետաքրքիր պատմելաոճը՝ դրսևորելով հմուտ ճառագրի իր ունակությունները։ Այս հատկանիշների ներդրումը ուսուցման գործընթացի մեջ հնարավորություններ է ստեղծում իրականացնել նաև լեզվի զարգացման և բառապաշարի հարստացման աշխատանքներ։

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով թեման՝ կարող ենք եզրակացնել՝

1. Առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականների համար, և դասավանդմանը պետք է հատուկ պատրաստվել, քանի որ առակների միջոցով ուսուցիչը պատկերացում է տալիս միմյանց հարևանությամբ ապրող ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մասին։

Ստեղծված լինելով գերազանցապես քաղաքային միջավայրում, առակագրքերի մեջ եղած ստեղծագործություններում արտացոլվել է այդ միջավայրի կյանքը ու կենցաղը։ Այսինքն՝ ուսուցիչը բացահայտում է նաև առակների ճանաչողական արժեքը

2.Ժողովրդական բանահյուսությունից ի հայտ եկած առակները միջնադարյան հայ գրականության մեջ տարածում գտան և սիրվեցին Մ. Գոշի և Վ. Այգեկցու միջոցով։ Նրանց դիտակտիկ նշանակությամբ պայմանավոված դրական այս ժանրը դարձել է թե՛ տարրական, թե՛ ավագ դպրոցի հայ գրակնության ծրագրի բաղկացուցիչը։ Սակայն առակների դասավանդումն նպատակային դարձնելու համար անհրաժեշտ է Առակի գրական ժանրի հետ կապված մի քանի եզրույթների հետ նախնական ծանոթացում.տարրական դասարաներում՝ ավելի պազ ու մատչելի, իսկ ավագ դասարաններում՝ համեմատաբ խոր և զուգահեռ օրինակներով։ Առակներն իրենց կարճ բովանդակությամբ, ամփոփ ընդհանրացումներով և սուր սյուժեով հեշտ մտապահվում են՝ այս կերպ դառնալով աշակերտների համար հեշտ ընկալելի ժանրերից։

3.Դասավանդման ժամանակ կարևոր է ներառարկայական կապ ստեղծել թե՛ Գոշի առակների հետ, նրանց հետ համեմատելով ներկայացնել Այգեկցու առակների բովանդակային և թեմատիկ ընդգրկումն ու հարստությունը, նոր միայն անցնել դրանց ներքին բովանդակության քննությանը։

## Օգտագործված գրականության ցանկ


1.Աստվածաշունչ մատյան, Հին և Նոր Կտակարանների, Հայաստանի աստվածաշնչյան ընկերություն, Էջմիածին, 2017:

2. Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականություն, պատմություն, Երևան , Տիգրան Մեծ 2009, էջ 197:

3.Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ, հրատ., 2016 էջ 174:

4. Մագիստրոս Գր., Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910,

6. Սանթոյան Մ., Գրականագիտական բառարան, Երևան, Վան Արյան, 2009:

7.Դ., Գասպարյան, Տես Հիսուսի առակները, հրաշքները, ուսուցումները, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 2008, էջ 498:

16.Մ. Գոշ, Առակներ, Ե., ԳԱ Հրատարակչություն, 1961, էջ 5-6: Աշխատասիրությամբ Է.Պիվազյանի, էջ 505:

17.Է. Պիվազան, Մ. Գոշ.-Հայ Մշակույթի նշանավոր գործիչները.5-18-րդ դդ, Ե., 1976,Երևանի համալսարանի հրատարակչություն, էջ 287: